ՂԱՓԱՆԻ ԾՐՀԱՆ

ԱՐԾՎԱՆԻԿ (ՀՆՈՒՄ՝ ԵՐԵՑ-ԵՐԻՑՎԱՆԻԿ)

Այժմ գտնվում է Ղափանի շրջանի մեջ, հնում մտնում էր մյուս Բաղք կամ Բաշունիք գավառի մեջ. հարկի չափն էր 12։ Երեց-Երիցվանիկ հին անունը ձևափոխվելով դարձել է այժմ Արծվանիկ։

Գյուղի սահմաններում կա երկու կարևոր հուշարձան. մեկը՝ Երիցու վանքը՝ գտնվում է գյուղից մոտ երեք կիլոմետր դեպի արևելք, բարձրավանդակի վրա, քարափի պռունկին։ Համաձայն մատենագրական տեղեկությունների, շինված է 6-րդ դարի կեսերին Երիցուկ վանականի կողմից (հետո եպիսկոպոս)։ Այժմ կիսավեր վիճակում են թե՛ քուն եկեղեցին և թե՛ շուրջը եղած մյուս շենքերը ու բակում առանձնակի կանգնած մատուռը։

Այս հուշարձանի պատերին ոչ մի արձանագրություն չկա։

Գյուղից կես կիլոմետր դեպի արևմուտք, մի թմբի վրա գտնվում է մի փոքրիկ թաղակապ եկեղեցի և շուրջը գերեզմանատուն։ Եկեղեցին շինված է կոփածո քարերով, ներսում և դրսից պատերի մեջ ագուցված են սրբատաշ, սպիտակավուն փոքր քարեր ու խաչքարեր, որոնց վրա կան 11-րդ դարի սկզբի արձանագրություններ։

Ներկա շենքն իր ճարտարապետական ոճով չի համապատասխանում արձանագրությունների ժամանակին՝ 11-րդ դարին. հավանաբար այդ հին շենքի տեղ նորն է շինվել և հնի արձանագրությունները խնամքով հավաքվել ու տեղադրվել են նորի պատերի մեջ։ Բակում գտանք հին շենքի քիվի անկյունի մի ատամնավոր քար, որը թե՛ նյութով (մուգ բազալտ) և թե՛ մանավանդ, մշակման բարձր տեխնիկայով բոլորովին տարբերվում է ներկա շենքից և միանգամայն համապատասխանում է 11-րդ դարի հուշարձաններին։

Եկեղեցու շրջապատի գերեզմանատան մեջ կան մի քանի հասարակ խաչքարեր ու գերեզմանաքարեր, թեև հին, բայց անարձանագիր։ Մնացածները գերաղանցապես 16—17 դարից են, դրանցից կարևոր են եկեղեցու հյուսիսային կողմում իրար մոտ գտնվող երկու օրորոցաձև տապանաքարերը, ուստա Ալագի շինածները, որոնցից միայն մեկի արձանագրությունն է ընթեռնվում դժվարությամբ։

Այս գերեզմանատունը մինչև այժմ էլ օգտագործվում է։ Գերեզմանատան հյուսիս-արևելյան կողմում, մի հարյուր մետր նրանից հեռու, դեպի գյուղ տանող ճամփի կողքին դարավոր ծառի տակ գտնվում է սպիտակավուն քարից և ամբողջովին ջարդոտված մի գերեզմանաքար, դա դավաճան Մելիք Ֆրանգյուլի գերեզմանն է, որին տեղացիք մի՛ անունով են միայն կոչում—«Ֆրանգյուլի գերեզման»։

Գյուղի արևմտյան եզրին էլ կա մի ավելի հին գերեզմանատան մնացորդներ, ուր կան մի քանի արձանագրված խաչքարեր և տապանաքարեր, որոնցից երկուսի արձանագրությունների մեջ հավանաբար նշանագրեր են գործածված (№ 403, 404)։

390. ԱՐԾՎԱՆԻԿ. գերեզմանատան միջի եկեղեցի. արևելյան պատի լուսամուտի հարավից ագուցված փոքր, սպիտակավուն քարի վրա՝ ներքուստ. 7 տ.



ՀԴ Ի ՎԵՆ
ԻՅԱՂԱԻԹՍՅ
ԻՀԵՑԷՔՍՏԵՓԱՆՈ
ՍՔԱՀԱՆԱԵԿԵՂԵՑՈՅՍ
ՊԱՇՏԱԻՆԷՍՈՐԴԻՅՈՒՍԻ
ԿԵՐԻՑՈՅ

Թվ. :ՆՂ:| Ի ՑԱՂԱԻԹՍ Ց|ԻՇԵՑԷՔ
ՍՏԵՓԱՆՈ|Ա ՔԱՀԱՆԱ, ԵԿԵՂԵՑՈՑՍ |
ՊԱՇՏԱԻՆԷՍ, ՈՐԴԻ ՑՈՒՍԻ|Կ ԵՐԻՑՈ։

Հուսանկ. տախտ. XL, 146

391. ԱՐԾՎԱՆԻԿ. գերեզմանատան միջի եկեղեցու. հյուսիսային պատի կենտրոնական մասում. ներքուստ ագուցված փոքր, սպիտակավուն քարի վրա. 9 տող.



Թվ. : ՆՂԴ : ՑԻՇԵԱ ՔՍ. | ԱԾ. ԶԳՈՒԳՈՐ ԵՐԵՑ, ԶԱԿ|ՈԲ ԷՐԷՑ, ԶՍԱՐԳԷՍ ԵՒ ՈՂՈՐ|-ՄԵԱՑ Ի ՔՈՒՄ ԱՀԵՂ ԱՏԵՆԻԴ. ԵՒ ՈՐՔ ԸՆԹԵՌՆՈՑՔ | ԱՑՑ ԵՂԷՔ ՄԵԶ ՄԵՂՈՒ-ՑԵԼ|ՈՒՑՍ | ԹՈՂՈՒԹԻՆ.... ԵՒ ԴՈՒՔ | ԳՏՉԻՔ ՈՂՈՐՄՈՒԹԻ | Ի ՏԵԱՌՆԵԼ:

392. ԱՐԾՎԱՆԻԿ. գերեզմանատան միջի եկեղեցու հյուսիսային պատի կենտրոնական մասում, ներքուստ, ագուցված փոքր խաչքարի շրջանակնե-րին.



ԶԿԱՆԳՆՈՂ ՄԲ ՆՇԱՆԻՍ ԶԳՐԻԳՈՐ ԵՒ ԶՍՏԵՓԱՆՈՍ ԵՐԻՑՈ ՑԻՇԵՑԷՔ ԻՒ ՔՍ ԵՒ ՏՐ ՑԻՇԵ ԶԵԶ:

Լուսանկ. տախտ. XL, 147

393. ԱՐԾՎԱՆԻԿ. գերեզմանատան միջի եկեղեցի. արևելյան լուսամուտի մոտ ներքուստ ագուցված խաչքարի շրջանակներին.

ԶԾԱՂԻԿ ՆՈՐՈԳՈՂ ԵԿԵՂԵՑՈՅՍ.
ԶԴԱՒԻԹ ՑԻՇԵԱ ՔՍ. ԱԾ.
ԹՎ. : ՆՁԱ :



394. ԱՐԾՎԱՆԻԿ. *Գերեզմանատան միջի եկեղեցի. բեմի վրա որպես վեմքար ագուցված խաչքարի բեկորի վրա.*

Ինչպես խաչքարի ոճը, նույնպես և արձանագրության գրչությունը նման է նախորդներին. ԺԱ դարի կոթող է։



395. ԱՐԾՎԱՆԻԿ. *գերեզմանատան միջի եկեղեցի. ներսում ընկած խաչքարի միջին մասի շրջանտկներին.*

ՐԹՎ. : ՆՂԹ : ՑԻՇԵԱՑ ՔՍ. .
.....ՓՈԽԵԱԼ ՑԱՇԽԱՐԷՍ.....

396. ԱՐԾՎԱՆԻԿ. *գերեզմանատան միջի եկեղեցի. հարավային պատի կենտրոնական մասում ագուցված սպիտակավուն քարի վրա. արտաքուստ, արևի ժամացույց, շառավիղների ծայրերին գրված Ա-ից Ժ և ապա՝ կրկին Ա. և Բ. առանց տասնավորի. թվականը պետք է։ ՆՂԹ։ լինի։*

--Ե :
ԵՒԱ-ԱՆՈՒԹԵԱ-Շ։Ա
ԵՂԵՑԻՍ ։։։ ···· ՈՍ····

397 ԱՐԾՎԱՆԻԿ. *գերեզմանատան միջի եկեղեցի. բեմի եզրին կանգնած փոքր խաչքարի տակին. 2 տ.*

ՑԻՇԵԱ ՔՍ. ԱԾ. ԶԴԱԻԻԹ ԵՒ ՈՂՈՐՄԵԱՅ.

ՅԻՂԵԱ | ՔՍԱԾԶ
ԴԱԻԻԹԵԻՈՂՈՐ

Վերջին երեք տառը չի գրված տեղ չլինելու պատճառով։

398. ԱՐԾՎԱՆԻԿ. *գերեզմանատուն. եկեղեցու հյուսիսային կողմում օրորացաձև տապանաքարի վրա. գոտիաձև.*



ԱՑՍ ՀԱՆԿԻՍՏ ԱՌԸՍՏԱՄ ՏՂԱՑ ՍԱՐՔԻՍԱ. ԳԻՐԵՑԻՔ ԹՎԱՅԿԱՅՆԻՍ
:ՌԾԸ: ԷՐ ՈՐ ԱՑՍ ՍԲ ԽԱՉՍ ՓՐԿՈՒԹԻՆ ՀՈԳՈՑՆ ՍՈՑԱՅ. ՍԱՐՔԻՍ,
ԱՌԸՍՏԱՄ ԻՄ ՀԱՐ ՍԱՐՔԻՍ ԻՄ ՄԱՑՐ ԹԱՐՎԻՉ . . . . . :
ՈՒՍՏԱՑ ԱՒԱՔ ԲԱՉՈՒՄ ԱՇԽԱՏԵՑԻ։

Տապանաքարի հյուսիսային կողին կենցաղային տեսարան է, թամբած ձի, նվաղող՝ սաղլ ձեռին, պարող, եղջերուներ երկու հատ, ըլիթներ ապա կրկին նվաղող։

Հարավային կողին՝ չորս խորաններ մեջերին խաչ։

Արևմտյան ճակատին խաչ, արևելյան՝ հավիտենականության նշան՝ տելիեֆ։

399. ԱՐԾՎԱՆԻԿ. դերեզմանատուն. Եկեղեցու հյուսիսային կողմում օրորոցաձև տապանաքարի վրա։

ԱԼՍԻ ՎԱԼԱԹ ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՀԱԼ ՈՒՄԱՅԻ ԱԼՈՒ : ԳԻՐԻԳՈՐ ՎԼ

ՏՈՆՈՐՈՍԿՈՍ

Այս արձանագրության մեջ՝ ՄԱՐՏԻՐՈՍ և Գ[Ի]ՐԻԳՈՐ՝ անուններից բացի մնացած բառերը հայերեն չեն, ըստ երևույթին պարսկերեն պիտի լինեն։

Արձանագրությունը խիստ քայքայված է. գերեզմանաքարը նախորդի կողքին է, հարավից, նույն ոճով շինված, կենցաղային քոնդակների փոխարեն նայնպես խորաններ են ու խաչեր։ Նույն ուստա Ավագի գործը պիտի լինի։



400. ԱՐԾՎԱՆԻԿ. դերեզմանատան մի փոքրիկ խաչքարի վրա։

ԹՎԻՆ : ՌՃԺԵ :



401. ԱՐԾՎԱՆԻԿ. գերեզմանատուն. մի փոքրիկ խաչքարի վրա։

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄԱԹԵՈՍԻ ՈՐԴԻ ՈՎԱՆԷՍԻՆ։

ՈՐԴԻ բառի մեջ սկզբի տառերը սխալ է տեղադրել գրիչը։ ՈՎԱՆԷՍ բառը գրված է հյուսիսային կողին։

402.՝ ԱՐԾՎԱՆԻԿ. գյուղի արևմտյան եզրի գերեզմանատուն. կանգնած խաչքարի ճակատին, շրջանակներին և կողին։



ԱՆՈՒՆ ԱՅ ԵՍ ԱՒՈՒՐ ԿԱՆԿՆԵՑԻ ՁԽԱՂԱՍ Ի ՓՐԿՈՒԹԵԱ
ԱՄԻՐԻՃԱՆԻՍ ԵՒ ԵԼԱՄԻՆ ԵՒ ՎԷՄՑԱՒ.....ԹՎ. : ՋԼԲ :

Աջակողմյան առանձնակի գրվածները կողին են։
Խաչքարի տակ կա տափակ գերեզմանաքար։

403. ԱՐԾՎԱՆԻԿ. գյուղի արևմտյան եզրի դերեզմանատուն. նախորդին մոտ հյուսիսից, կանգնած խաչքարի կողերին.

ԱՆՈՒՆ	ՈՆԾՀԵ	ԱՆՈՒՆ Ա.Ց ԵՍ ԱՒՈՒՐ ԿԱ.ՆԿՆԵՑԻ
ԱՅԵՍԱՒ	ԻՈԵԼՄՏԵԻ	ՁԽԱ.ՁՍ Ի ՓՐԿՈՒԹ ՀՈԳՈՒ. . . ՄԻՆԱ.
ՈՒՐ·ԿԱԿՆ	ՄՆԱՒՂ··	ԽԱ.ԹՈՒՆԻՆ Ա.Ծ ՈՂ.ՈՐՄԻ ԹՎ. :ՉԼԲ:
ԷՑԻՁԽԱՁ	ԹՈՒՍԱԾ	
ՍԻՓՐԿԻԿՈԹ	ՈՂՈՐՄ	
ՀՈԳՈՒԽ	ԹՁԼԲ	

Առաջին սյունակը հյուսիսային կողին է, երկրորդը՝ հարավային։

Երկրորդ սյունակի առաջին չորս տողերը ծածկագիր կամ նշանագրերով են։

404. ԱՐԾՎԱՆԻԿ. գյուղի արևմտյան եզրի գերեզմանատուն. ոպիտակավուն քարից օրորոցաձև տապանաքարի վրա։

ԵՍՈՎԱՆԷՍՍՈԼՄԱՆ		ԵՍ ՈՎ.ԱՆԷՍ ՍՈԼ.ՏԱ.Ն ՁԳԱ.ՐՍ
ՁԴԱՐՍՈՐԴՈՅԻՄՈՅՍ		ՈՐԴՈՑ ԻՄՈՑՍ -Ա.Ր.Գ.Ա. Լ.ՈՐԻ.
-ԱՐԴԱԼՈՐԻԿԱՁՄ	ՈԼՆ	ԿԱ.ՁՄՈՂ.Ն ՍՀԱ.Կ . . . . .
ԻԷՁԿԻԻՐՆԻՄԿՈԼԸԱՀԻ	ԱՀԱԿ	

Աջակողմյան սյանյակի երկու տողը արևմտյան ճակատին է։

ԱՐԳԱ բառի սկզբից մեկ տառ ջարդված է։

Վերջին տողը ծածկագիր և նշանագրերով է։

Վ.Ա.Հ.Ա.Ն Ա.Վ.Ա.Ն Գ

Գտնվում է Ղափանի շրջանի մեջ, ամայի տեղում, Շհարջիկ գյուղի դիմաց, գետի հանդիպակաց աջ ափին։ Հնում մտնում էր Ջորք գավառի մեջ։

Ստ. Օրբելյանն իր պատմության մեջ այս վանքի շինությանն ու կարգավորմանը նվիրել է մի հատուկ գլուխ (ԽԵ). համաձայն որի Սյունյաց իշխաններից Ջագիկի կրտսեր որդի Վահանը՝ դառնալով կրոնական՝ շինում է այս վանքը և իր անունով կոչում Վահանավանք, 911 թ.,—«Ցոյժ դեղեցիկ յօրինուածովք, գմբեթայարկ և եռախորան, հաստահեղոյս և տաշածոյ վիմօք». այստեղ ևն հավաքվում 100 վանականներ, իսկ իշխանները նվիրում են վանքին չորս գյուղ և այլ կալվածներ։

Վանքի հիմնադիր Վահանին հաջորդում է իր եղբորորդին, նույնպես Վահան անունով (հետագայում Սյունյաց եպիսկոպոս և ապա կաթողիկոս). սա ևս կառուցում է մի շարք նոր շենքեր «Աղոթարան ի դրան եկեղեցւոյն վիմարդյան մահարձանօք, յորում հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք և թագուհիք Աղվանից և Բաղաց, և բազում իշխանք փառաւորք Սիսական աշխարհիս», շինում է նաև տրապէզ (սեղանատուն), մեծ դավիթ և փողրակներով ջուր բերում մինչև վանքը։

Ավելի ուշ, Բաղաց Գրիգոր թագավորի օրոք, թագուհի Շահանդուխտը իր քույր Կատայի և Սենեքերիմ թագավորի հետ շինում են եկեղեցի մեծամեծ կամարների վրա, բաղմասյուն սրահներ և այլն։

Հիշատակված այս բոլոր շինություններից այժմ կիսափուլ վիճակում մնում են մի եկեղեցի ու գավիթ, որոնց կտուրներն ամբողջովին և հարավային պատերի էլ մեծ մասը փլել են. դավթի առաստաղից մնացել են բաց սարածության մեջ մեծամեծ քարերով շարված երկու հիանալի կամարներ։ Սրանցից արևմուտք մի հարյուր մետր հեռու նույնպես կիսափուլ վիճակում մնացել են Շահանդուխտի շինած եկեղեցին, ժայռին կից, կամարների վրա, որպես երկրորդ հարկ, սրա էլ կտուրն ամբողջովին և արևելյան պատը կիսովին փլել են։ Շրջապատի փլատակները ծածկված են խիտ անտառով։

Շենքերը շինված են բազալտի սրբատաշ և մեծամեծ քարերով, որոնց հանքատեղը գտնվում է հուշարձաններից հյուսիս, մոտ 200 մետր հեռու, սարալանջին։